ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2018 թվականի դեկտեմբերի 3-6-ը
ք. Մոսկվա /Ռուսաստանի Դաշնություն/ գործուղման արդյունքների մասին

1. Անուն, ազգանուն՝

Նաիրա Կարապետյան
Վահագն Լալայան

2. Զբաղեցրած պաշտոնը՝

ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության Եվրասիական տնտեսական միության և արտաքին առևտրի վարչության պետ և ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության ներդրումային քաղաքականության վարչության պետ

3. Գործուղման վայրը և ժամկետը՝

ք. Մոսկվա, Ռուսաստանի Դաշնություն, 2018 թվականի դեկտեմբերի 3 - 6-ը

4. Հրավիրող կողմը՝

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի նախաձեռնությամբ

5. Գործուղման նպատակ

Եվրասիական տնտեսական միության ու անդամ պետությունների և Սինգապուրի Հանրապետության միջև ազատ առևտրի մասին Համաձայնագրի (այսուհետ՝ Համաձայնագիր) կնքման շուրջ բանակցությունների վեցերորդ փուլին մասնակցելու նպատակով

6. Քննարկված թեմաները՝

Եվրասիական տնտեսական միության ու անդամ պետությունների և Սինգապուրի Հանրապետության միջև ազատ առևտրի մասին Համաձայնագրի կնքման շուրջ բանակցությունների վեցերորդ փուլի ընթացքում քննարկվել են վերոհիշյալ Համաձայնագրի նախագծի առանձին բաժիններ, մասնավորապես՝ իրավական և հորիզոնական պարտավորությունները, փոխադարձ առևտրի դյուրացումն ու խթանումը, առևտրի պաշտպանիչ միջոցները, մրցակցային քաղաքականությունը, էլեկտրոնային առևտուրը, պետական գնումները և այլ բնագավառներին առնչվող խնդիրներ: Համաձայնագրի շուրջ վարվող բանակցությունների ընթացքում հիմնականում քննարկվել են Համաձայնագրին կից ցանկերը, որոնց մեջ ներառված ապրանքատեսակների հանդեպ Կողմերը պատրաստ են տրամադրել սակագնային արտոնություններ, ինչպես նաև նշված ցանկերում ներառված ապրանքների ծագման երկրի որոշման չափորոշիչները: Վերոհիշյալ ցանկերում հայկական կողմից ներկայացվել են ՀՀ համար արտահանման հետաքրքրություն ունեցող մի շարք ապրանքատեսակներ:

Համաձայնագրի նախագծի լրամշակված տարբերակը՝ ըստ բաժինների, քննարկումների արդյունքում համաձայնեցված էր Եվրասիական տնտեսական միության անդամ երկրների համապատասխան փորձագետների միջև կայացած խորհրդակցությունների ժամանակ:

Բանակցությունների շրջանակներում քննարկվել են նաև Համաձայնագրին կից ծառայությունների և ներդրումների մասին առանձին երկկողմ Ներդրումների և ծառայությունների ազատ առևտրի համաձայնագրերի նախնական տեքստերը:

Հայկական և սինգապուրյան կողմերի միջև առաջնահերթ քննարկվել է Ներդրումների և ծառայությունների ազատ առևտրի համաձայնագրի ձևաչափը և ընտրվել է ներդրումների և ծառայությունների մասով նեգատիվ ցանկերի ձևավորման տարբերակը՝ հաշվի առնելով դրա միջազգային պրակտիկայում ավելի առաջադեմ համարվելու փաստը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության դրական փորձը այդ ձևաչափով նմանատիպ համաձայնագրերի կնքման ոլորտում (օրինակ՝ ՀՀ-ի և Ճապոնիայի միջև համաձայնագիրը):

Քննարկվել է նաև Ներդրումների և ծառայությունների ազատ առևտրի համաձայնագրի բուն տեքստը: Ի սկզբանե ԵԱՏՄ երկրների ընդհանուր մոտեցումը եղել է ձևավորել ԵԱՏՄ երկրների համար համաձայնագրի ընդհանուր տեքստ, որից երկրները Սինգապուրի հետ բանակցություններում կընտրեին իրենց համար նախընտրելի ձևակերպումները կամ կարող էր քննարկվել նաև երկու երկրների համար ընդունելի այլ տեքստ, որը, սակայն, իր հիմնական սկզբունքներով չի հակասում ԵԱՏՄ երկրների կողմից մշակված ընդհանուր տեքստի ձևաչափին: Սինգապուրյան կողմը ներկայացրել է իր ավելի պարզեցված տեքստը և, հաշվի առնելով, որ վերոհիշյալ տեքստը ավելի համահունչ էր միջազգային պրակտիկայում ընդունված ժամանակակից լավագույն փորձին, ինչպես նաև, հաշվի առնելով, որ Սինգապուրի տնտեսությունը և ՀՀ տնտեսությունը ավելի ազատ են, քան ԵԱՏՄ մյուս երկրների տնտեսությունները, որոշվեց առաջնորդվել Սինգապուրի կողմից առաջարկված տեքստով՝ հաշվի առնելով նաև ՀՀ շահը: Վերոհիշյալ համաձայնագրի տեքստի կարևոր կետերը ուսումնասիրվել և քննարկվել են, այնուհետ օպերատիվ, էլեկտրոնային եղանակով ուղարկվել են Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն: Հիմնական սկզբունքները և խոշոր հատվածները քննարկելուց հետո, սինգապուրյան կողմին ներկայացվել է նաև Հայաստանի Հանրապետությունում գործող ընթացակարգը, առ այն, որ վերջնական դիտողությունները և առաջարկությունները կարող են տրամադրվել միայն շահագրգիռ մարմինների միջև համաձայնեցնելուց հետո: Արդյունքում՝ պայմանավորվածություն է ձեռք բերվել սինգապուրյան կողմին ուղարկել դիտողությունները մինչև ս.թ. դեկտեմբերի 31-ը:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Համաձայնագրի շուրջ քննարկումներին մասնակցել են Եվրասիական տնտեսական հանձնաժողովի և Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների, ինչպես նաև Սինգապուրի Հանրապետության առանձին ոլորտների մասով փորձագետներ:

Ոլորտային քննարկումների ժամանակ ներկայացվել են Կողմերի հիմնական տարաձայնությունները՝ Համաձայնագրի նախագծի առանձին բաժինների վերաբերյալ

և արդյունքում մի շարք հարցերի ուղղությամբ կողմերի միջև ձեռք է բերվել համաձայնություն:

Մասնավորապես՝

Իրավական և հորիզոնական պարտավորությունները գլխի քննարկման ժամանակ Կողմերը մանրամասն քննարկեցին «Ընդհանուր դրույթներ», «Ինստիտուցիոնալ դրույթներ», «Թափանցիկություն», «Եզրափակիչ դրույթներ» և «Վեճերի կարգավորում» հոդվածները, ինչպես նաև Շրջանակային համաձայնագիրը: Քննարկումների արդյունքում Կողմերը համաձայնության եկան առկա տարաձայնությունների մասով:

Կողմերը համաձայնության եկան «Ներածական դրույթներ և ընդհանուր սահմանումներ» բաժնի շուրջ և որոշեցին «Արժույթի միջազգային հիմնադրամ» սահմանումը վերանայել «Վճարային հաշվեկշռի ապահովմանն ուղղված սահմանափակումները» հոդվածի շուրջ համաձայնության գալուց հետո:

«Ինստիտուցիոնալ և ընդհանուր դրույթներ» բաժնում քննարկվեց հարկման, ընդհանուր բացառություններ և անվտանգության նկատառումներից ելնելով բացառություններ պարունակող հոդվածները և ընդգծվեց տվյալ հարցերի շուրջ քաղաքականության մոտեցման որոշակի տարբերություններ: Կողմերը համաձայնեցին ներպետական քննարկումներ անցկացնել և շարունակել բանակցությունները՝ տարբերությունները նվազագույնին հասցնելու նպատակով:

Կողմերը հանգամանալից քննարկեցին Համաձայնագրի շրջանակներում ստեղծվող Համատեղ կոմիտեի գործառույթներին առնչվող հարցերը: Սինգապուրյան կողմի ներկայացրած նախագծի համաձայն Համատեղ կոմիտեն օժտված է Համաձայնագրում փոփոխություն կատարելու լիազորությամբ, ինչի վերաբերյալ հայկական կողմը ներկայացրեց նկատառումներ՝ առաջարկելով Համատեղ կոմիտեի լիազորությունների վերանայում: Մասնավորապես ներկայացվեց այն, որ միջազգային պայմանագրի առարկային և նպատակներին չառնչվող տեխնիկական բնույթի փոփոխությունները կատարվում են պայմանագրի կողմերի միջև համաձայնեցված կարգով և եղանակով, և որ Համատեղ կոմիտեն կարող է Համաձայնագրի ցանկացած փոփոխության վերաբերյալ Կողմերին ներկայացնել առաջարկությունների ուսումնասիրում և նախապատրաստում, Համաձայնագրի կիրարկման ու կիրառման հետ կապված ցանկացած հարցի ուսումնասիրում: Եվրասիական տնտեսական հանձնաժողովը անդամ պետությունների ներպետական համաձայնեցման արդյունքում սույն հարցի շուրջ կներկայացնի առաջարկություններ հետագա նիստերի ընթացքում:

Սինգապուրյան կողմը համաձայնեց «Թափանցիկություն և հակակոռուպցիա» բաժնում հանել հակակոռուպցիային վերաբերող դրույթները:

«Վեճերի լուծման դրույթները» բաժնում X.7 հոդվածի մասով սինգապուրյան կողմն առաջարկեց կողմերի միջև վեճերի լուծման ԱՀԿ անդամ հանդիսացող պետությունների համար ԱՀԿ գլխավոր քարտուղարի՝ որպես արբիտր նշանակման մոտեցումը, իսկ ԱՀԿ անդամ չհանդիսացող պետությունների համար՝ Արդարադատության միջազգային դատարանի նախագահի նշանակումը: Կողմերը դրականորեն արձագանքեցին այդ առաջարկին և մանրամասնորեն կուսումնասիրեն և կդիտարկեն հետագա նիստերի ընթացքում: Քննարկվեց նաև Հանձնաժողովի առաջարկությունն առ այն, որ արբիտրաժային խմբի նախագահը չպետք է հանդիսանա

այն երկրի քաղաքացի, որի հետ ԵԱՏՄ անդամ պետություններն ու Սինգապուրը չունեն դիվանագիտական հարաբերություններ: Այդ կապակցությամբ, սինգապուրյան կողմի խնդրանքով, հայկական կողմը տրամադրեց այն պետությունների ցանկը, որոնց հետ Հայաստանի Հանրապետությունը չունի դիվանագիտական հարաբերություններ (ԵԱՏՄ մյուս անդամ պետությունները կներկայացնեն երկրների ցանկն իրենց մասով մինչև հաջորդ քննարկումը):

Եվրասիական տնտեսական միության հանձնաժողովի կողմից առաջարկվեց «Եզրափակիչ դրույթներ» բաժնում ուժի մեջ մտնելու հոդվածը (X.2) լրացնել նոր երկրորդ պարբերությամբ, համաձայն որի Համաձայնագիրը ենթակա է վավերացման:

Շրջանակային համաձայնագիր.

Կողմերը համաձայնության եկան ուսումնասիրել Սինգապուրի առաջարկությունները նախաբանի վերաբերյալ և վերանայել այն՝ նախաբանի մյուս պարբերությունների լույսի ներքո:

Շրջանակային համաձայնագիրը և դրանում ներառված երկկողմ համաձայնագրերը կկազմեն մեկ ամբողջական փաթեթ և կունենան նույն պարտադիր իրավական ուժը:

Ապրանքների առևտուր գլխի քննարկման ընթացքում Կողմերը համաձայնեցրին հանել «Վերականգնված ապրանքներ» և «Մաքսատուրքից ազատում» հոդվածները: Համաձայմագրին կից ապրանքների ցանկերի մասով, որոնց հանդեպ Կողմերը պատրաստ են տրամադրել սակագնային արտոնություններ, պայմանավորվածություն ձեռք բերվեց մի շարք ապրանքների մասով մաքսատուրքի իջեցման հարցի վերաբերյալ:

Ապրանքների ծագման երկրի որոշման առանձնահատուկ չափորոշիչների Ցանկի քննարկման արդյունքում Կողմերի միջև համաձայնություն ձեռք բերվեց թվով 5300 ապրանքային դիրքերից 4500-ի մասով:

Առևտրային պաշտպանիչ միջոցներ գլխի քննարկման արդյունքում համաձայնություն է ձեռք բերվել ԵԱՏՄ անդամ պետությունների համար նախընտրելի դրույթի սահմանման վերաբերյալ, որը, իր հերթին, ենթադրում է գնային պարտավորությունների նախագծի ներկայացման պարագայում խորհրդատվությունների անցկացման հնարավորություն, ինչպես նաև de-minimis կանոնի օգտագործում կրկնակի հետաքննությունների անցկացման ժամանակ:

Էլեկտրոնային առևտուր գլխի քննարկման արդյունքում Կողմերի միջև համաձայնություն ձեռք բերվեց «Էլեկտրոնային ստորագրություններ», «Էլեկտրոնային առևտրում տեղեկատվության անդրսահմանային փոխանակում», «Սպառողների շահերի պաշտպանության» և «Անձնական տվյալների պաշտպանություն» հոդվածների վերաբերյալ:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Բանակցությունների արդյունքում նախնական պայմանավորվածություն ձեռք բերվեց առ այն, որ նշված Համաձայնագրի շուրջ կայանալիք հերթական յոթերորդ փուլը կանցկացվի 2019 թվականի փետրվար ամսին՝ Եվրասիական տնտեսական միության անդամ երկրներից որևէ մեկի տարածքում:

Կողմերի միջև ստորագրվեց Եվրասիական տնտեսական միության ու անդամ պետությունների և Սինգապուրի Հանրապետության միջև ազատ առևտրի մասին Համաձայնագրի կնքման շուրջ բանակցությունների հինգերորդ փուլի արդյունքներով կազմված Արձանագրություն:

9. Գործուղվող՝

ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների
նախարարության Եվրասիական տնտեսական միության
և արտաքին առևտրի վարչության պետ
Նաիրա Կարապետյան

ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների
նախարարության ներդրումային քաղաքականության
վարչության պետ
Վահագն Լալայան

10. Ստորագրություն, ամսաթիվ

11.12.2018 թ.